ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 2

«17» 01 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխան հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի պետական ծառայողների պաշտոնների անձնագրերն ուժը կորցրած ճանաչելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ղեկավարի տեղակալի դատախազության աշխատակազմում պետական ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» N 38 հրամանը:

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում

պետական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 38 հրամանը:

3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անձնագրեր հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 38 հրամանում փոփոխությունների կատարելու մասին» N 73 հրամանը:

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2014 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անձնագրեր հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 38 հրամանում փոփոխությունների կատարելու մասին» N 28 հրամանը:

5) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2014 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անձնագրեր հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 38, 2013 թվականի նոյեմբերի 1-ի N 73 հրամաններում փոփոխությունների կատարելու մասին» N 72 հրամանը:

6) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2014 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի զինվորական դատախազության կենտրոնական մարմնի տարածքային վարչության պետի տեղակալի պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» N 73 հրամանը:

7) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի գնումների և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալի պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» N 45 հրամանը:

8) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ղեկավարի խորհրդականի պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» N 43 հրամանը:

9) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնի անձնագիր հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2014 թվականի մարտի 31-ի N 28 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 118 հրամանը:

10) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անձնագրեր հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2014 թվականի մարտի 31-ի N 28, 2015 թվականի հուլիսի 14-ի N 45 հրամաններում փոփոխությունների կատարելու մասին» N 95 հրամանը:

11) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Երևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» N 13 հրամանը:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ